**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

29 ՄԱՐՏԻ 2024թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 3 անդամներ:

Բացակա էր՝ Մրազ Միրոյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Մրազ Միրոյան, Նաիրա Գևորգյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մրազ Միրոյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նաիրա Գևորգյանը**

Լսեցին
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Մեծաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Մեծաձոր համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Մեծաձոր համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 29-ի հերթական նիստի օրակարգը՝

1. Մեծաձոր համայնքի սեփականություն հանդիսացող ՄՏԶ 82.1 մակնիշի տրակտորը և հակավորող գործիքը վարձակալության տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

2. Մեծաձոր համայնքի ավագանու 2024թ.-ի հունվարի 19-ի <<Մեծաձոր համայնքի 2024 թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին>> N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 8-Ա/

Լսեցին
**ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՏԶ-82.1 ՄԱԿՆԻՇԻ ՏՐԱԿՏՈՐԸ ԵՎ ՀԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԵՔԵՆԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման

մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Մեծաձոր համայնքի ավագանին որոշում է՝

1. **Համաձայնություն տալ Մեծաձոր** համայնքի սեփականություն հանդիսացող ( 2023 թվականի արտադրության, գույնը կապույտ, շարժիչը-209740, փոխանցման տուփը՝ 078248, ամրաշրջանակ Y4R900Z01P1132469, պետհամարանիշ 7240 ԼՏ, տեխնիկական վկայագիր 003087, ՄՏԶ-82.1) մակնիշի անիվավոր տրակտորը, հակավորման մեքենան/ TUKAN-HP, 2023 թվականի արտադրության, IIIT-042/ վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համար և հաստատել մեկնարկային գին՝ տարեկան 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ վարձավճար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 9-Ա/

Լսեցին
**ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի <<ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ.- Ի ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33 և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Մեծաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեծաձոր համայնքի ավագանին որոշեց.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Մեծաձոր համայնքի ավագանու 2024թ.-ի հունվարի 19-ի N 2-Ն որոշման մեջ կատարել փոփոխությունններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10-Ն/

Ավագանու անդամներ

ՍՈՒՏԱԼ ԱԲԱՍՅԱՆ

ԹՈՌՈՒՆ ՇԱՄՈՅԱՆ

ՀԵՐԻՔ ՇԱՄՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Նաիրա Գեվորգյանը